ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ և ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<«ՀՀ ԼՄՎՔ ԲԸԾՁԲ 17/50»>>

Վանաձոր <<01>> հունիսի 2017թ.

<<Վանաձորի համայնքապետարանը>>, ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ԼԱՅՎ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գարեգին Անտոնյանը (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության ուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 տերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ անկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել ատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և ատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի դյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով` ելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ ատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու աստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի ջոցով` մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը ... պատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի ասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի տորագրվում և Պատվիրատուն`

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով խատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման` գնման հայտը նախագծած րկայացուցչի կողմից տրված` պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական րակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված ատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա մկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից տորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման` ման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված` պայմանագրի կամ դրա մի մասի կատարման աբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում` սույն պայմանագրի ... կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում յմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 ռով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային ումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը զմում է 137 000 000 (հարյուր երեսունյոթ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է ատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ հմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ` դրամական ոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների հանգումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` սույն պայմանագրի N

-- հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե րձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 ւնկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված ււմարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով սխատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, ւականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 ւկտեմբերի 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման` սույն պայմանագրի ւահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին ամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է ուգանք` սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) ոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում ատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատուցման ենթակա, սակայն ատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և ւ...նցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների ւտ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման ւպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` ճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի ափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները ատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ ենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային արտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով արտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ...է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ սնխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և ատակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության ջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ...ծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ղմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման ատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում ձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է

---

*[1] պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի ատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

ղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ մքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր պքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի կատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ ներկայացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

---

[2] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[3] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ ատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած աան են:

Սույն պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ այմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող արտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել այմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող արտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ րծարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար ատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին անուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ ենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի ասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային այքում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու րաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետում նշված կայքում ապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: ամաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն ավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N3.1 հավելվածները անդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ ինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ այմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով աստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| <<Վանաձորի համայնքապետարան>> | <<ԼԱՅՎ>> ՍՊԸ |
| ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22 | ք.Վանաձոր Չուխաջյան փ.շ36/31 |
| <<Կենտրոնական գանձապետարան>> | <<ՎՏԲ Հայաստան բանկ>> |
| ՀՎՀՀ 06901936 | ՀՎՀՀ 06952855 |
| Հ/Հ 900232545021 | Հ/Հ 16093026572500 |
| ----------------Մ. Ասլանյան (ստորագրություն) | ----------------Գ. Անտոնյան (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված 1*
*<<01>>հունիսի 2017թ. կնքված N<<ՀՀ ԼՄՎՔ ԲԸԾՁԲ 17/50>>*
*ծածկագրով գնման պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|
| Անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի փողոցների, մայթերի, հրապարակների, և յլ ինժեներական կառույցների ամենօրյա ձեռքի սանիտարական մաքրման ծառայություններ և ւնցաղային աղբահանություն: |

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը $8^{30}$-ին: ողոցների, մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է պահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և լազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան վված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ ետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող արածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի ացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և ա...ծքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավլելու միջոցով՝ տագործելով նաև գոգաթիակ:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման ամար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա համապատասխան քենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի ջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:

ւնցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան ղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Թարմ, դեռևս չամրացած ձյունը մինչև 2սմ. հաստության շերտով պետք է մաքրվի ցախավելի ջոցով, իսկ 2 սմ-ից ավելին՝ քերելով (քերիչ-թիակով): Բարելավված ծածկույթ ունեցող արածքներից ձյունը պետք է մաքրվի լրիվ, իսկ անբարեկարգ տարածություններից՝ ոչ լրիվ, ղնելով ձյան մի շերտ (ամրացած) հետագա տեղումների մաքրելը հեշտացնելու համար: արածքներից հավաքված ձյունը պետք է վերածվի թմբերի կամ կույտերի, որոնք դասավորվեն յ...ին զուգահեռ:

Տրանսպորտի նորմալ երթևեկությունն ապահովելու նպատակով ձնաթմբերը պետք է ստակվեն այնպես, որ նրանց հիմքերի լայնությունը 1,5 մ-ից ավելի չլինի:

նուհետև հավաքված ձյունը պետք է տեղափոխվի սպասարկվող տարածքներից: Ձյան մրացումից խուսափելու նպատակով տեղումների սկզբնական շրջանում նպատակահարմար է ունը մշակել ավազի և քլորիդների (ըստ տեխնոլոգիայի) խառնուրդով:

Սառցակալած կամ պնդացած ձյան շերտը սպասարկվող տարածքներից պետք է մաքրվի այն ախապես քայքայելուց կամ ջարդելուց հետո: Սառցակտորների հեռացումը պետք է կատարվի տրելուց և կուտակելուց անմիջապես հետո: Մինչև 2 սմ. հաստությամբ սառցակույտերը, ախքան մաքրումը, պետք է մշակվեն քլորիդներով:

Հավաքված ձյան և սառցե կույտերը մեքենաների միջոցով պետք է հեռացնել մայթերից:

Ըստ սպասարկվող տարածքների մայթերի, ու հրապարակների ձմեռային մաքրումը պետք է ատարվի նույն հերթականությամբ, ինչ-որ ամառային մաքրման դեպքում:

Պետք է իրականացվի գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, ախադրման, աղբավայրում տեղադրման և փողոցների, տարբեր տարողունակություն ունեցող րամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ ետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ, աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:
Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից տարածքը: ղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա ատարկելուց թափված աղբը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ ութերով: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի պքում երկու օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: ղբամուղի տարածքն ավլել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել ղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը ականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: ղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի 2k ռակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

անաձոր համայնքի փաստացի մաքրվող մակերեսը 320923.0 մ$^2$/օր: Մեկ երթի երկարությունը կմ տեղափոխությունը գոտու ներսում 6կմ, ընդամենը 32կմ: Կենցաղային աղբի կուտակման անակը 2017 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսների համար համար կանխատեսվում է՝աղբի ստակման քանակ 13232.00 տն. և իրավաբանական անձերի համար 2877.83 տն ընդամենը 109.863:

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| .06.2017թ | 31.12.2017թ |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

<<Վանաձորի համայնքապետարան>>
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232545021

---------------Ս. Ավանյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ԼԱՅՎ>> ՍՊԸ
ք.Վանաձոր Չուխաջյան փ.շ36/31
<<ՎՏԲ Հայաստան բանկ>>
ՀՎՀՀ 06952855
Հ/Հ 16093026572500

---------------Գ. Անտոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 2*
*<<01>> հունիսի 2017 թ. կնքված*
*N<<ՀՀ ԼՄՎՔ ԲԸԾՁԲ 17/50>>*
*ծածկագրով գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.` ըստ ամիսների` ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերում | | | | | | 17810000 | 38360000 | 57540000 | 76720000 | 95900000 | 116450000 | 137000000 | 137000000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

<<Վանաձորի համայնքապետարան>>
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232545021

----------------Մ. Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ԼԱՅՎ>> ՍՊԸ
ք.Վանաձոր Զուխաջյան փ.շ36/31
<<ՎՏԲ Հայաստան բանկ>>
ՀՎՀՀ 06952855
Հ/Հ 16093026572500

----------------Գ. Անտոնյան
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված 3*
*<<01>> հունիսի 2017թ.*
*կնքված N<<ՀՀ ԼՄՎՔ ԲԸԾՁԲ 17/50>>*
*ծածկագրով գնման պայմանագրի*

Պատվիրատու

Պայմանագրի կողմ
<<ԼԱՅՎ>> ՍՊԸ
ք.Վանաձոր Չուխաջյան փ.շ36, 1
<<ՎՏԲ Հայաստան բանկ>
ՀՎՀՀ 06952855
Հ/Հ 16093026572500

<<Վանաձորի համայնքապետարան>>
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232545021

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝Վանաձոր համայնքի կենցաղային աղբահանության և
ւհիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերում
յմանագրի կնքման ամսաթիվը՝ «01» «հունիսի» 2017 թ.
ր ագրի համարը՝ <<ՀՀ ԼՄՎՔ ԲԸԾՁԲ 17/50>>
տվիրատուն՝ ի դեմս Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Հայկ Հովսեփյանի և
յմանագրի կողմը՝ ի դեմս «ԼԱՅՎ», հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________» 2017թ.
վված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝
որն նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և
ան ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| Մատուցված ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն
ձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

<<Վանաձորի համայնքապետարան>>
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232545021

---------------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ԼԱՅՎ>> ՍՊԸ
ք.Վանաձոր Չուխաջյան փ.շ36/31
<<ՎՏԲ Հայաստան բանկ>>
ՀՎՀՀ 06952855
Հ/Հ 16093026572500

---------------Գ. Մանոնյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3.1
<<01>> <<հունիսի>> 2017թ. կնքված
N <<ՀՀ ԼՄՎՔ ԲԸԾՁԲ 17/50>> *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Վանաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ ․վիրատու) և

«ԼԱՅՎ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. հունիսի 01 -ին կնքված N <<ՀՀ ԼՄ ԲԸԾՁԲ 17/50>>
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

ներկայացուցիչ՝ հայտը նախագծած

_______________________________ _______________________________

ազգանուն, անուն ազգանուն, անուն

_______________________________ _______________________________

ստորագրություն ստորագրություն

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

<<Վանաձորի համայնքապետարան>>
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900232545021

----------------Մ. Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<ԼԱՅՎ>> ՍՊԸ
ք.Վանաձոր Չուխաջյան փ.շ36/31
<<ՎՏԲ Հայաստան բանկ>>
ՀՎՀՀ 06952855
Հ/Հ 16093026572500

-------------Գ. Անտոնյան
(ստորագրություն) Կ.Տ